

## ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՍԵՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Պատմութիւն ասուածանրաւ խն իւաց յաղագա ազատուքեան Մըրոց  
Յակոբեանց Առաքելական նախագահ Արքուոյն Երաւաղեմի.

ընկալեալ ի ծերունաձափկի պատվամեծար Մահմետի Տէր  
Մելոն գերբնիք բանայի Պալատու Սուրբ Էկիդնեցւոյն:

Ի ժամանակի պատրիարքութեան Մըրոց  
Աթոռոյն Երուսաղեմի Տեառն Գրիգորի  
Եղիշայակիր անուանեալ Արքազան Վեհաւ  
պետի և Կոստանդնուպոլսոյ Պատրիարք  
Տեառն Յովհաննու Կոլոս կոչեցեալ Արքե-  
պիսկոպոսի, կայր ոմն յաղէն Յունաց  
Արքա Գալֆա ասացեալ, ճարտարապետ  
ներքինապետի արքային, որոյ տունն էր  
մերձ Մեթօհիին որի Ֆէնէռ, և ամարանոցն  
ի ծովափն Այասպարոսի: Այս այր յուսացեալ  
ի ջրութիւն ներքինապետին՝ յարոց մեծ  
վէճ ընդ ազգիս Հայոց յաղագա Մըրոց Յա-  
կոբեանց գերազան Աթոռոյն Երուսաղեմի,  
և յայն աստիճան բարբաքեցաւ այս վէճ  
աղջային, մինչե հարկ եղե երանելի հայ-  
րապետին Գրիգորի առնուլ զարքունի հրա-  
մանագիրս՝ որ վասն մեր լինելոյ Մըրոց  
Յակոբեանց Աթոռոյն՝ եւ ելանել զալ ի  
Պոլիս մեծ, որովք եւ քանիցս ի դատ  
վարեալ ընդ Յունաց՝ չկարաց չահիլ լինչ,  
քանզի նոցին կողմն, ձեռնաւութեամբ  
ներքինապետին, առաւել զօրացեալ երեէր.  
վասն որոյ և զմեր սէնէտա առեալ ի կող-  
մանէ տէրութեան՝ արգելուն անզը և որպէս  
թէ լուս մնան:

Այլ զկնի աւուրց՝ յանկարծ յիրեկոյեան  
իմն պահու՝ լուր աղէտալի թօթոյ հասանէ  
առ միրայինսն, թէ ի վաղիւն ընդ առաւո-  
տուն զԱթոռն Մըրոց Յակոբեանց տէրու-  
թիւնն հանգերձեալ է տալ ազգին Յունաց:  
Լուսեալ զայս երկուց Մըրազան Հայրապե-  
տացն՝ թէպէտե անհնարին տրտութեամբ  
լցան, բայց արիութեամբ զգօտին ընդ մէջ  
ածեալ՝ մէծաւ հաւատով եղին զյոյս իւր-  
եանց առ Աստուած, և երկոքին ի միտափին  
յերրորդ ժաման զիշերին դէմ եղեալ զնա-  
ցին ի Պալտա, առ արքունի ճարտարապետ  
Մահմետի Աղայն, որոյ քարաշէն տունն  
էր հանգէպ Առերբ Հրեշտակապետ եկե-  
ղեցւոյն Պալտառու: Ի մտանել նոցա անզը՝  
տեսեալ զԱթեղբաք ազա սիրելի որզի Մահ-  
տեսի Մելքոնին, հարցանեն նմա՝ եթէ Մահ-

տեսի Աղայն անստ է, ունիմք ինչ հարկա-  
ւոր բանս խօսել նմա: Իսկ նա խարէ զնոսա  
թէ Զէ ասաւ: Քանզի հայր նորա զես նոր  
մտեալ էր յանկողին, և ոչ կամի ձանձրա-  
ցուցանել զնաւ: Այլ երանիկացն լուսեալ  
զստուգութիւն պատասխանի պատանեկին՝  
արտմութեամբ և ցաւօք զառնան յիստ է  
Ենդ ելանել նոցա ի տանէ անտի, մինչ  
հասանին ի զուռն Առերբ Հրեշտակապետ  
եկեղեցւոյն, յանկարծ մահահրաւէր իմն  
ցաւ խօստուկի պատահի Աղջրաքին որում  
ճարտար բժիշկիք չկօրին զկեղ ուղղու-  
թեան զտանել: Կոչեն զժամարար քահա-  
նայն եկեղեցւոյն, որում խօստովանեալ  
մեղաց ասութեան՝ հազորզի ի կենարար  
մարմնոյ և արեան Քրիստոսի և ի նոյն  
ժամու, ի պատիժ ստախօսութեանն առ  
սուրբան Աստուծոյ, աւանդէ զողզին իւր  
առ Աստուած, զրկեալ ի վայելչութենէ  
կենաց աստի: (\*)

Այլ երանիկացն ուշի կուրծ արարեալ,  
զիմին անտի ի Լանկայ՝ ի տուն Մուրատան  
բարեպաշտօն Յարութիւն Ամիրային, որ էր  
սիրելի հատավաճառ զենպետին (Հէլիիւ-  
լամին): Տեսեալ սպասուորացն Միլիա-  
յին զերկոսին Մըրազանսն՝ նոյն հետայն  
զարթուցանեն զՄահանեսի Ամիրայն: որ և  
փութանակի (զար) առ նոսա և համբուր-  
մամբ որբոց աջացն հարցանէ: Երջանիկ  
հարք իմ սրբազանք, առ ի՞նչ ի մէջ զեշերի  
աշխատութիւն յանձն առեալ եկեալ էք

(\*) Արքունի ճարտարապետ Մահմետի Մել-  
քոնի որզիին Մահամետի Սեղրաքի յանկարծ աման  
ըլլալու պարագան կը հաստատուի նաև Մըրոց  
Յակոբեանց տաճարին մէջ Առերբ Մինասի մատ-  
րան ստավեայ զրան վրայի հետեալ արձա-  
նագրութեամբ: Ցիշատակ է ասուուծաւէր  
Տարսիանցի Մահամետի Մելքոնին և կողակցոյն  
Հաճի նազլուին եւ իյր նորա ծաղիկ ի կարկէ մահուն  
յանկարծ նարեալ ի խուրիսն նոգոյ Հաճի Սեղրաքին  
և կենդանի որզոյն Հաճի Գրիգորին և ամենայն  
զարմից նորա: ԱՃԶԳ (=1734):

առ ծառայ ձեր: Եւ նոքա տան: Աստուածանէր Մահակեսի Աղա՛յ, ոչ վասն մեր անձանց ինչ, այլ վասն պարծանաց աեղեացն համօրէն ազգիս Հայոց Մրրոց Յակոբեանց Աթոռոյն ազատութեան՝ յայսպիսի յանդէպ ժամու եկեալ եմք առ ազնուականութիւն ձեր, զի եթէ առաւօտեան թօնումք՝ զնայ ի մէնջ այն անզին հոգեոր զանձն ազգին, յափշտակեալ յանրարի ազգաց թշնամիաց: Եւ պատմեն միլստմիոջէ զեղեւութիւնն: Ասէ Ամրիայն: Բարի է զոր ասէքդ, հարք իմ սրբազնք, այլ ի մէջ զիշերիս զիս՞րդ զօրեցից զնալ առ որ հարկ իցէ երթալ և Ասեն երանելի Հայրապետքն թէ՝ Մեք մեծաւ հաւատով և յուսով յանձն առնեմք զքեզ Աստուծոյ և ազօթս առնեմք՝ զի ընդ քեզ եղիցի և ի թիկունս օգնականութեան հասցէ: Իբրև լուաւ բարեպաշտ իշխանն զյուսահատութեան բանս նոցա, յանձն էառ զնալ, և ասէ: Ահաւասիկ յուսով յօդնութիւն Աստուծոյ՝ ըստ ձերց բանից զնամ, և զուք կացէք աստ և ազօթս արարէք, զի յաջողեցէ Տէր ըստ կամաց հաճոյից ձերոց: Եւ ջերմ սիրով համրուրեալ զսուրք աջս նոցին, ելեալ ի տանէն զնաց ուղղակի յօթեան զենապեախն, ազդ արարեալ սպասաւորացն զարթուցանել լզգենպեան, Զի յոյժ հարկաւոր բանս ունիմ ծանուցանել նմա, ասէ: Գնան սպասաւորքն զարթուցանել զգենապեան՝ զտէր իւրեանց, ծանուցանելով զզալուսան հասավաճառին զիշերայն յաղագս յոյժ հարկաւոր զործոյ իրիք: Ելեալ զենապետին յանկողնոյն զնալ ի միջոյ տեղին, որ է մատէյն օտասին, որում մատուցեալ պատիւ յարզութեան՝ պատմէ զինդիր Արբազանիցն և արտառուահայց աղաչանօք անկեալ յոտսն՝ ասէ: Տէ՛ր իմ բարերար, եթէ զիշերիս ոչ կատարեսցես այս գործ, յառաւօտեան ելանէ այն մեծակառոյց վանքն ի ձեռաց մերոց, որ է պարծանաց տեղի համօրէն Հայոց ազգիս մերոյ: Վարանեալ իմիտս զենապեան՝ լուռ և եթ մեայ, և ապա զթութեամբ իմն զիջեալ ի ինդիր նորին՝ հրամայէ պատրաստել զկառս իւր և պատուիրէ Մահակեսի Ամրային մեալ անդ. Զի ես երթայց, ասէ, առ արքայն: անսցուք զիա՞րդ յաջողեացէ Աստուած: Եւ ի զիշերայն զնաց կառօք ի պալատ արքային, ուր իջեալ ի կառացն՝ հստի յիւրապատշաճ տեղին ի մապէյն:

Եւ անգանօր տեսեալ զմեր արքայական հրովարտակի վերայ բարձրն՝ ճանաչէ: Կ պատուէր տայ հրամանատարաց, զարթուցանել զարքայն, զոր և զարթուցեալ՝ ծանուցանեն զգալուս զենապետին: Եւ արքայն ապշեալ ընդ անակնկալ և յանդէպ ժամանակի զաւուս նորա՝ ել արտաքս և ըստ ծիսի ողջունեալ զմիմիանս՝ նստին: Հարցանէ արքայն թէ՝ Զի՞նչ պատճառաւ ի մէջ զիշերի զիմեցեր առ մեզ: Ասէ զինպեան: Տէ՛ր իմ արքայ, ի գիշերիս հաստաւ քուն աշացս, և ըստ ամենայնի անհանգիստ եղէ, զի երիցս անզամ մերս Մարզպարէն երեհալ յանուրջս իմ՝ հրամայիաց զալ անպատճառ առ Զիր Տէրութիւնն, և ես ահարեկեալ և անձար մնացեալ՝ եկի, և ոչ զիտեմ զի՞նչ իցէ պատճառն, զոր Տէր ի բարին կատարեացէ: Ական ապա տատի անտի խօսիլ: Եւ զենապեան ճարտարութեամբ իմն եմոյծ ի մէջ խօսակցութեան զվէճն երկուց ազգացն, առ որ պատասխանի տայ արքայն թէ՝ Յերուսաղէմ քաղաքն լիալ է մեծազոյն վանք մի Մար-Եազուպ անուն, որ յառաջազոյն ազգի Յունաց եղեալ իցէ եւ ապա խարզակութեամբ Հայք տիրեալ են մինչեւ յարգ: արդ զարձեալ տալոց եմք ազգին Յունաց, ահա ա՛յս է սէնէտն Հայոց ազգին, (զոր մինչև յայն վայր չէր ընթերցեալ եւ տեղեկացեալ ի նմանէ ինչ): Ասէ զինպեան: Տէր իմ արքայ, եթէ հաճեացէ կամք ձեր՝ ընթերցուք միանդամայն զհրովարտակս զայսի: Եւ նա հրամայեաց ընթեռնուլ, զոր և սկսաւ ի վերուստ ընթեռնուլ և մի առ մի բացատրել զամենայն սեպհականեալ սուրբ տեղիս մեր Ապա սկսաւ ընթեռնուլ և ընդովզն ըստ իւրեանց օրինի, այն է թէ՝ Ո՛վ որ զոսա առցէ ի Հայոց ազգէն և տացէ այլոց ազգաց՝ ժառանգեսցէ զվերոյ զրեալ նզովսն: Իրերե լուաւ (արքայն) զբանս զայսոսիկ՝ զահի հարեալ ասաց զենապետին: Ո՛ հայր իմ, միթէ անզիտութեամբ զնզովսն զայսոսիկ ժառանգելո՞ց էաք: Եւ իսկոյն հրամայիաց բերել զկաղամար և զգրիչ, կրկին մակագրեաց ի վերայ խատթին խատթ մի ևս թէ՝ Եւ ես գարձեալ վերստին հտու ազգին Հայոց: Եւ ապա գոհացան զՏեառնէ և շնորհակալ եղեն զՕրէնսդրէն իւրեանց, որ ի ձեռն տեսլեան զերծոց զարքայն յայնպիսի մեծ վտանգէ: Յետ այնորիկ

ինդիք մատուց արքային՝ չնորհել զհրավարտակն ինքեան, զի տացէ աղջին Հայոց, և նա յօժարական կամօք և սիրով ետ նմաւ։ Հուսկ տապա համոզելով զարքայն՝ ասէ. Տէ՛ր իմ, ահաւասիկ ծանեաք զշնորհ և զզթութիւն Սրաբչին, զոր արար մեղ. արգ՝ հրամայեալ հանգից Տէրութիւն Զեր և ծառայ քո առնում մինչեւ ցառաւօտ հանգիստ աստանօր։ Զայս ասեւ լով յզեաց զարքայն ի ներքինս, և իսկոյն տուեալ զհրովարտակն միում ի հաւատարիմ ծառայից իւրոց՝ ասէ. Ա՛ռ զսա եւ փութով տար տո՛ւր Խօճա Յարութիւն հարազատին միրոյ։ Տարեալ զհրովարտակն սպասաւորին՝ ասէ. Ահաւասիկ բերի ըզիլնդրեալն ձեր, վասն որոյ տո՛ւր ինձ հազար սոկի ի պարզեւ Եւ նա ասէ. Սրգարե արժանի իսկ է, յառաւօտուն եկ ի սենեակն և առցես անզակաս։

Իսկ բարեպաշտօն Ամիրայն անպատճելի ուրախութեամբ որտի յարուցեալ անտի փութանակի ընթացմամբ՝ իւրու թես տուեալ, զայ ի տուն և տեսանէ զերկոսին հրանելի սրբազան Հայրապետքն, զի տակաւին բացաւ զլխով և յորդահոս արտաւոք կային յաղօթս, մատուցմամբ ի համբոյը չնորհաբաշխ որրոց աջացն նոցին, ուրախական աւետեօք տայ զհրովարտակն՝ ասելով. Աչք ձեր և մեր լուսաւոր եղիցի՞։ ահաւասիկ արժանահայց աղօթիւք ձերովք կրկին չնորհեաց մեզ Աստուած զցանկալին ազանց և զանգին զանձն՝ զլթոռն Սրոց Յակորեանց առաքելոց։ Եւ բարեմաղթութեամբ օրհնեն զարդանին օրհնութեան զՄահաեսի Յարութիւն Ամիրայն և զայս։

Իսկ ի լուսանալ առաւօտուն զնաց Արագ Խալֆայն առներքինապետն զի տացէ զինզրեալն իւր։ Եւ ներքինապետն ոչ զիտելով զիրն եղելութեան՝ մտանէ առ արքայն, որ իրեւ տեսանէ զվատաշնորհն այն՝ նախատանօք յանդիմանէ զնա սսելով. Ա՛զ ամենաթշուառ չարագործ, զո՞ւ լինելոց էիր պատճառ արկանելոյ զիս ի ներքոյ այնպիսի բանագրանաց օրինաց մերոց։ Այլ ես բարւոք իմացեալ զստուգութիւն իրին՝ կրկին հաստատուն հրովարտակաւ չնորհեցի ազգին Հայոց զիւրեանց բնիկ սեպհական տեղիս։ Այսպիսի անարգութեամբ կրկին սեպեալ պետն ներքինեաց կորագլուխ և ամօթալի ելանէ յերեսաց

արքային, առ որ ի մատչելն Սրապ Խալֆային ասնուել զակնկալեալ հրովարտակն՝ ասէ ներքինապետն թէ, Հայք ի մէջ զիւշերի կատարեալ են զզործս իւրեանց՝ առեալ կրկին հրովարտակ ի մեծագօր արքային. զոր իրեւ լոււաւ՝ հրացեալ ապուշմաց։ Եւ մինչ խոսէին նոքա անդ՝ եկն գումական ոմն ի տանէն Խալֆային ողբալով և ասէ ցնա. Զի՞ կաս արդեօք անդէն, փութամ, զի որդին քս սիրելի յերկիր կործանեալ և ուշթափեալ մեաց ապշութեամբ։ Ապա յարուցեալ կոծելով զանձն գնաց ի տուն, ուր տեսեալ զսիրելի որդին իւր ի պատանեկութեան հասակի այսպիսի պատահական մահուամբ մեռեալ, լայլ և ողբայր անմիտիթար, և ի միտ տեսեալ զչարիս, զոր խորհեր առնել ալլոց, զզջայր և եղուկ կարգայր վատարախտ անձին իւրոյ։

Զհարկաւոր և զպիտանի պատմութիւնս այս մինչեւ յարդ ոչ էր արձանացեալ զրով, այլ միայն աւանդութեամբ բանագէտ ձերոց լուիր։ Իսկ այժմ զրեցաւ առ ի ծանուցանել և ապառնի եկելոց, զի իմացեալ փառս վերառաքեցեն Ամենազօր հրաշազործողին և տացին ի խորոց սրտէ զողորմիս յայնմիկ ժամանակի գտանեցեալ ազգաոէր և բարեպաշտ անձանց, և զի խնդրեսցուք ի Բարեբարէն՝ զի մի պակասեցուցէ յազգէս մերմէ զայնպիսի հոգելի կարգաւոր և բարեպաշտ իշխաննս, և օրինակ տեսեալ ի նոցունց բարուցն, հետեւող լիցուք և մեք՝ ուղելով զվարս մեր առ ի պատրաստ գտանիլ ի մենամարտիլ վասն ազգասիրութեան և մի՛ յետս նահանջել։

Գրեցաւ յամի Տեհան 1832 յամսեանն Մարտի, ի Պոլու՝ մինչ էի տարագիր անզանոր հանգերձ երկու որդւովքս Տէր Պաղտասարիւ և Տէր Ստեփանոսիւ։

Ես նուաստ Տէր Մելքոնս Պոլսեցի։

Հայտարակեց՝ Մ. Ա. Ն.

